

НЕРСЕС МКРТЧЯН. Семитские языки и армянский. Ереван, «Дразарк», 2004, 376 с.

ՆԵՐՍԵՍ ՄԿՐՏՉՅԱՆ. Սեմական լեզուները և հայերենը. *Երևան, «Դրազարկ», 2004, 376 էջ:*

Գրախոսվող աշխատությունը նվիրված է հայերենի և սեմական լեզուների ունեցած մերձեցումներին, և ընդգրկում է Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակից՝ շումերա-աքքադական շրջանից, մինչև միջնադար: Գիրքը խմբագրել է Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Վ. Վ. Բվանովը և տպագրության համար հանձնարարական է գրել Վրաստանի ազգային ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Թ. Վ. Գամկրելիձեն:

Ն. Մկրտչյանը հայերենի հարուստ, բազմաշերտ բառապաշարից առանձնացրել է այն բառերը, որոնք պատկանում են սեմական լեզվաընտանիքի այս կամ այն լեզվաճյուղին: Մի քանի հարյուր սեմական բառերից քննում և առանձնացնում է հայերենի հետ ամենահին մերձեցումների արդյունք հանդիսացող աքքադերեն, քանաներեն, արամեերեն, ասորերեն, ասորա-արաբերեն և այլ արաբերեն բառերը:

Ն. Մկրտչյանից առաջ Հ. Հյուբշմանը հայերենի սեմական փոխառություններին նվիրված մի ուսումնասիրություն է գրել՝ *Die semitischen Lehnwörter in Armenischen.* – ZDMG, 1892 (*Հայերենի սեմական փոխառությունները*), սակայն այստեղ, փաստորեն, միայն ասորերենից և արաբերենից փոխառյալ բառերն են քննվել և քննելու ակնարկ է անում հայերենում մի քանի աքքադական բառերի գոյության մասին:

Հայերենում աքքադերեն (ասորերեն) բառերի գոյության մասին խոսել են Ն. Ադունցը, Բ. Խալաթյանցը, Գ. Մազգյանը, Հ. Աճառյանը, Գ. Ղափանցյանը, Յ. Կարստը, որոնց հայտնաբերած աքքադերեն բառերի թիվը 40–50-ից չի անցնում, իսկ այս գրքում դրանց թիվը հասնում է 400-ի: Ավելին, բառային փոխառություններից բացի հեղինակը

մատնանշում է նաև ընդհանուր արեալային ծագմամբ քերականական ձևայիններ ևս, որոնք շատ կարևոր են նախահայերենի և սեմական ու կովկասյան լեզուների վաղնջական մերձեցումները հաստատելու, արեալային ընդհանուր բնույթի ծագումն ապացուցելու տեսանկյունից:

Գրքի կարևոր արժանիքներից պիտի ընդգծել հայերենում քանաներենի նստվածքի գոյությունը և մինչև արաբների Հայաստան արշավելը արաբերենից հայերենի կատարած փոխառությունների փաստը: Այս երկու աղբյուրներից եկող սեմական փոխառությունների մասին առաջինը մատնանշում է հեղինակը:

Մ. Խորենացու մոտ կան քանանացիներին վերաբերող տողեր, սակայն ոչ ոք դրա վրա ուշադրություն չի դարձրել: Այսպես՝ Պատմահայրը հիշատակում է քանանական ծագում ունեցող հետևյալ նախարարական տների մասին, որոնցից են՝ Արծրունիները, Գնունիները, Գնթունիները, Ռշտունիները, Գողթնեցիները, Կաղմեանները, Սիսակյանները. «Մենք ստուգելով հաստատ իմացանք, որ Գնթունիների ցեղը անտարակույս սրանցից է սերված, և այս ցեղի բարքը ցույց է տալիս, որ քանանացի են»¹ – գրում է Խորենացին: Մեկ այլ առիթով ընդգծում է քանանացիների ունեցած մեծ կշռի մասին, հայոց արքունիքում. «Իրեն զգեստներ հագնող նշանակում է Ձեռեսին, քանանացոց սերնդից» (Գիրք Բ, գլուխ Է): Բանն այն է, որ վերջին տարիներին պեղումները Էրլայում հայտնաբերեցին քանաներեն գրված սեպագիր սալիկներ: Իսկ Սարգոնի արշավանքներում Էրլան և

¹ Մ ո վ ս ե ս Խ ո Ր Է Ն ա ց Ի. Հայոց պատմություն. գիրք առաջին, գլ. ԺԹ, Երևան, 1981, էջ 72, ծանոթ. 2:

Արմանին միասին են հիշատակվում, որից որոշ վերապահումով կարելի է հետևեցնել, որ Արմանի երկրի լեզուն նույնպես քանաներենն է եղել: Ուրեմն աքքադացիների հետ քանանացիները ևս մեծ ներդրում պիտի ունեցած լինեն հայերենի բառապաշարում, ինչպես Արշակունիներն ու Պարթևներն ունեցան՝ իրանական հազարավոր բառեր ներմուծելով հայերենի մեջ:

Ն. Մկրտչյանի հայտնաբերած մյուս նորությունը մինչև արաբների Հայաստան արշավելը արաբերենից հայերենի կատարած փոխառությունների իրողությունն է: Հ. Հյուբշմանը և Հ. Աճառյանը զարմանք են հայտնել մինչև արաբների Հայաստան գալը հարյուրավոր արաբերեն բառերի հայերենի բառապաշարում հայտնվելու առթիվ, թեև մեր պատմիչները, Հայաստանին սահմանակից համարելով Տաճկաց երկիրը, տաճիկ բառի տակ հասկացել են արաբներին: Ուրեմն, մեր մատենագրության մեջ վաղ շրջանի արաբերեն փոխառությունները հետագա հավելագրումներ կամ ընդմիջարկումներ չեն եղել, այլ արամեա-արաբական կոյնեից կենդանի շփումների միջոցով հայերենին փոխանցված բառեր (այս մասին հեղինակը 1980-1987 թթ. երեք հոդված է հրատարակել «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսում):

Ինչպես գրքի խմբագիր Վ. Վ. Բվանովն է ընդգծում, «Մկրտչյանի գիրքը հազեցած է հարուստ փաստական նյութով», որն ընթերցողների առջև բացում է քիչ ուսումնասիրված անհայտ մեր պատմության վաղնջական շրջանի վարագույրները:

Ըստ թեմաների բաժանված գլուխները, իրենց բառացանկերով, տարբեր մասնագետների համար (ազգագրագետներ, պատմաբաններ, բարբառագետներ, կրոնի պատմությունն ուսումնասիրողներ և այլն) կդառնան տվյալներ քաղելու շտեմարան:

² «Արաբերեն փոխառություններ հայերենում (նախքան արաբների արշավանքը Հայաստան)».- ՀՄՄՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1980, № 3, էջ 49-64: «Արաբերեն փոխառություններ հայերենում (նախքան արաբների արշավանքը Հայաստան)».- Նույն տեղում, 1984, № 2, էջ 72-82: «Արաբերեն փոխառություններ հայերենում».- Նույն տեղում, 1987, № 10, էջ 54-60:

Այսպես, օրինակ, մինչև այժմ հայոց հին կրոնի վերաբերյալ տվյալները եղել են իրանական պանթեոնի զուգահեռները՝ Անահիտ, Միհր, Արամազդ և այլն, այժմ՝ շումերա-աքքադական աստվածներն ու ոգիները լրացնում են այդ շարքը, ինչպես՝ Նեոը, Նանեն, Գիսանեն, Նարը, Նուրիը, Արան ոգիներից՝ Ալը, Խիպիլիկը, Գաբուսիկը և այլն:

Եթե իրանական պանթեոնը հաջորդում է ուրարտականին, ապա աքքադա-շումերական աստվածությունների և ոգիների գոյությունը հայերի մեջ մեր ժողովրդի պատմությունը երկու հազարամյակով ավելի հեռուն է տանում:

Գրքում բերված լեզվական հարուստ նյութը հնարավորություն է տալիս աքքադական փոխառությունների լույսի տակ մերժելու, այսպես կոչված, հայերենի օրինաչափություններից շեղվելու հատկությունն ու վարկածը: Հեղինակը ցույց է տալիս, որ «հնդեվրոպական» համարվող որոշ բառեր պարզապես աքքադերեն փոխառություններ են և որևէ «շեղում» տեղի չի ունեցել հայերենում:

Հեղինակը մերժում է նաև նույնքան վիճելի հայերենի «առաջին» և «երկրորդ» քնննազանն ենթադրությունները: Ն. Մկրտչյանը ընդգծում է հայերենի աքքադական զուգահեռների այն երկակի դերը, որ ունեն հայերենում պահպանված բառերը՝ ճշգրտելու համար ենթադրվող աքքադերեն բառերի նշանակությունները: Այսպես, օրինակ, մի գլուխ հատկացված է հենց այդ խնդրին: Օրինակ ոսպի համար ենթադրվում է աքքադերենում «ինչ-որ մի հացահատիկ». այս մոտավոր նշանակությունը ճշգրտում է հայերեն զուգահեռը:

Հ. Աճառյանը զարմանքով արձանագրում էր, որ հայերենը, լինելով հնդեվրոպական լեզու, երկրագործական մշակույթի հետ կապված ոչ մի գործիքի անուն չունի³: Միակ բառը՝ արօր-ը, ենթադրվում էր

³ Երկրագործական գործիքներից շատերի անունները, ինչպես՝ մաճ, խոփ, մանգաղ, գերանդի, կանդրիվ, փոցիս, տափան, ցաքան, հեծանոց, հոսելի և այլն, հնդեվրոպական ծագում չունին (Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն. մաս 1. Երևան, 1940, էջ 124):

վարկածային *arətərom բառից, արմատը՝ *aro: Սակայն այս միակ բառն էլ հստակ ստուգաբանվում է աքքադերենով *harār-* «խորացնել, ակոսել» *har-* «խոր, փորել» արմատից: Ոչ միայն արօր-ը, այլև երկրագործական մշակույթի հետ կապված *ողջ գործիքների համալիրը ստուգաբանվում է աքքադերենով: Չէ՞ որ գործիքի անունն իր կատարած գործողության անունից է գալիս: Այսպես՝ հայերեն պարոր-ը «տափան», պարորել «տափանել» աքք. *parār* «տափանել», մանկեռ-ը «մեծ փոցխ», մանկեռել, աքք. *managār* «քերել, արմատներ պոկել», ցակատ-ը աքք. *zaqāt* «հատել», կշռը-ը (կամ քշռը) աքք. *gašāš* «էտել, հատել», շաղափ-ը աքք. *šalāp* որից՝ շեղբ «կորզել, փորել-հանել», սանդ-ը աքք. *sanād-* «տղկել, ծեծել» և այլն:*

Նմանապես *ռոռգման համակարգի հետ կապված «ջրափոս», «ավազան», «կորի»* և այլ գուգահեռներ գտնում ենք աքքադերենում, ինչպես ուփ «ջրափոս, ջրավազան», գուռն «տակառ, ցիստերն», գուբ և գետից ջուր հանելու գործողությունը դուղել ձևով հայերենում աքք. *dālu-*ից է գալիս:

Երկրագործական մշակույթի բառերը հայերենում և աքքադերենում ցույց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհում և Միջագետքում բնակչությունը նստակյաց էր դարձել անհիշելի ժամանակներից: Նույնիսկ ցորենի մշակման ասպարեզում շարքացանի միջոցով ընտիր ցորեն ստանալու մշակույթ էր ստեղծվել: Դա կոչվում էր Դրի հաց, դրի ցորեն՝ ԴԻԸ «կարգ, շարք» բառից: Աքքադերենում NINDA *dir-* «դրի ցորեն, դրի հաց»:

Ելնելով այն բանից, որ հայերենը հնդեվրոպական լեզու է, համեմատական լեզվաբանության ներկայացուցիչները երբեմն շինծու և բռնագրոսիկ հնչյունական անցումներ են մակաբերել, մինչդեռ այդ բառերի մեծ մասը աքքադական (սեմական) ծագում ունի: Չէ՞ որ աքքադերենը Հին Արևելքի միջագային լեզուն է եղել շուրջ 2500 տարի, ինչպես հունարենն ու լատիներենը՝ եվրոպական լեզուների համար:

Հեղինակը շուրջ հարյուր աքքադերեն բառերի օգնությամբ ցույց է տալիս այն իրողությունը, որ հայերենը «չի շեղվում» հնչյունական օրինաչափություններից.

այդպիսիք ենթադրվող բառերը աքքադերեն են և սխալմամբ են համարվել «հնդեվրոպական» (էջ 121–139):

Նշենք նաև, որ Ն. Մկրտչյանի գիրքը նվիրված է հայերենի բառապաշարի ամենահնավանդ շերտերին՝ սեմական լեզուների հետ նրա ունեցած ոչ միայն բառային, այլև քերականական ընդհանրություններին: Այսինքն՝ հրապարակի վրա է սեպագիր աղբյուրներից՝ աքքադերենից, քանաներենից, արամեերենից սկսած մինչև արաբերենի հետ ունեցած մերձեցումների հետևանքով հայերենում հայտնված երկու հազարից ավելի սեմական բառերի քննությունը ներկայացնող մի գործ, որը որքան լեզվաբանական, նույնքան էլ՝ պատմագիտական արժեք ունի:

Բնականաբար, փոխառյալ բառերը ևս նույնքան կարևոր են, որքան սեփական մայր լեզվից ժառանգածները, որովհետև դրանք սպացուցում են հնավանդ դրացիական կապերի, մերձեցումների գոյությունը տարբեր լեզվաընտանիքների պատկանող լեզուների միջև: Եթե հայերենի բառապաշարում հարյուրավոր աքքադերեն բառեր են պահպանվել, ուրեմն հայերը մ. թ. ա. երրորդ հազարամյակից աքքադացիների հարևաններն են եղել՝ սկսած Հայկական լեռնաշխարհում աքքադական ֆակտորիաների ժամանակներից, որոնց հետքերը պահպանվել են նաև բազմաթիվ տեղանուններում և ջրանուններում (Թիլ, Թորդան, Եփրատ, Դկղաթ, Արածանի, Նպատ և այլն):

Գիրքը գերծ չէ նաև թերություններից: Այսպես, հայերենն իր լինելության ընթացքում շփվել է սեմական մի քանի լեզուների հետ, որի պատճառով դժվարանում է այսինչ կամ այնինչ բառի փոխառության ստույգ ժամանակը որոշելը, մանավանդ որ չկան հայերեն V դարից ավելի վաղ վկայված գրավոր աղբյուրներ, հեղինակը, հենվելով բարբառների տվյալների վրա, փոխառությունները ենթադրում է ամենավաղ աքքադական շրջանից: Հեղինակի այն պնդումը, թե քանանական ծագում ունեցող ազդեցիկ նախարարությունները հայ ժողովրդի կազմավորման հարցում պիտի մեծ դեր խաղացած լինեին, մնում է որպես ենթադրություն՝ լեզվական փաստերի սակա-

վության պատճառով: Մյուս կողմից, թերևս, դա պայմանավորված է էբլայից պեղված սեպագիր քանաներեն բառարանի տպագրության ուշացման պարագայով: Գրքի վերջում պակասում է հեղինակի օգտագործած հայերեն գրականության ցանկը: Չէ՞ որ դա կարևոր է մասնագետների համար հղումներն ստուգելու կամ որևէ

թեմայի վերաբերյալ հավելյալ տեղեկություններ ստանալու տեսանկյունից:

Ամփոփենք. Մկրտչյանի հեղինակած աշխատանքը լուրջ ներդրում է ընդհանուր լեզվաբանության, հայերենագիտության բնագավառում. այն ունի ինչպես լեզվաբանական, այնպես էլ պատմագիտական, ազգագրական, մշակութաբանական կարևոր նշանակություն:

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏԲԱՆ